№ 235 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 № 235

ԿՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1900** ԹՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապարդիւն վէճ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Շուշից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Տրանսվաալեան պատերազմը. Նամակ Եվէյցարիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կարօտեալների մէջ։

ԱՊԱՐԴԻՒՆ ՎԷՃ

Եւրօպական լրագիրները հաղորդում են, թէ Հաբէշստանի Մենելիք թագաւորը դիտաւորութիւն ունի առաջիկայ գարնան ճանապարհորդութիւն անել դէպի Եւրօպա և այցելել Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը։ Նրա առաջին կայարաններից մէկը կը լինի Պալեստինը և նրա գլխաւոր սրբավայր Երուսաղէմը։ Հաբէշստանը Աֆրիկայի մէջ միակ թագաւորութիւնն է, որ հին ժամանակներում ընդունեց քրիստոնէութիւն և ամենադժուար ու աննպաստ հանգամանքների մէջ պաշտպանեց նրան անձնուրացութեամբ և արիութեամբ։

Հաբէշստանի թագաւորի Երուսաղէմ այցելելու դիտաւորութիւնը առիթ է տուել մի մանաւոր վիճաբանութեան, թէ ի՞նչ տեսակ քրիստոնէութիւն է Հաբէշստանի ժողովրդի դաւանած կրօնը. կազմո՞ւմ է նա ինքնուրոյն ճիւղ, թէ պատկանում է եղած դաւանութիւններից որևիցէ մէ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԻ ՄԷՋ

Տգէտ և աղքատ է այս Մատիւչկինօ գիւղը։ Երևակայեցէք, 1200 բնակիչ ունեցող գիւղը չունի ոչ եկեղեցի, ոչ կանօնաւոր ուսումնարան, մինչև անգամ ոչ մի չաբչու խանութ. մի տուփ լուցկի գնելու համար մարդ ստիպված է 10 վերստ ճանապարհ գնալ։ Պօստատունը գտնվում է 25 վերստ հեռու, իսկ հեռագիր ուղարկելու համար պէտք է յատուկ սուրհանդակ վարձել և ուղարկել 50 վերստի վրա գտնվող քաղաքը։ Այս դրութեան մէջ են և շրջակայ շատ գիւղեր, ուր ապրում են այլազգիներ.—Սամարայի նահանգը գալուց առաջ ես գտնվում էի Ֆինլանդիայում։ Տեսնելով տեղիս բնակիչների, մարդվինների խեղճութիւնը՝ յակամայից համեմատում էի սրանց Ֆինների հետ։ Երկուսն էլ մի ցեղի են պատկանում, մինոյն ծագումն ունեն։ Մինչդեռ Ֆինը իր գրանիտեայ ճահճային հայրենիքից ստեղծել է նախանձ գրգռող մի ծաղկած երկիր՝ մարդվինն աղքատութիւնից տնքում է իր արգաւանդ երկրում։

Ես շփվում էի գլխաւորապէս մարդվինների հետ, կարողացայ մի քիչ ճանաչել այդ հետաքրքիր ժողովուրդը։ Աւելորդ չեմ համարում սրանց մասին մի քանի պատմական տեղեկութիւններ հաղորդել։

Մարդվինները պատկանում են ֆին-ուգրեան ցեղին և, թւով մի միլիոն հոգի, բնակվում են միջին Վոլգայի մօտերքում մինչև Օրէնբուրգ։ Շատ վաղուց ի վեր, մինչև XVII դարը, նրանք բռնում էին միայն այն կտոր երկիրը, որը եռանկիւնի է կազմում Վոլգա, Օկա և Կուդ-

մա գետերի միջտեղը։ Երբ ռուսներն առաջին անգամ հանդիպում են մարդվիններին՝ սրանք արդէն նստակեաց և երկրագործ ժողովուրդ էին, կառավարվում էին իրանց սեփական իշխաններով, ունէին քաղաքներ և բերդեր։ Նիժնի-Նովգորոդ քաղաքի կառուցանելուց յետոյ, այսինքն XIII դարից ի վեր, ռուսները յաճախակի ընդհարումներ են ունենում մարդվինների հետ։ Մի քանի անգամ սրանք անաջող փորձեր են անում այդ քաղաքին տիրանալ։ Թէպէտ 1377 թուականին չարաչար ջարդում են նիժեգորոդցիներին և Մոսկվայի իշխան Դմիտրիի զօրքերին, բայց այդ յաղթութիւնը դարձեալ արդեօք չէ լինում ռուսների առաջ խաղալուն։ Իսկ երբ Կազան քաղաքի ամուր պարիսպներն ընկնում են Յոհան Դ-ի մի առջև՝ այդ ժամանակվանից մարդվինները սկսում են հպատակութիւն ցոյց տալ ռուսաց կառավարութեան։ Նոր յաղթված, բայց միշտ ապստամբվող ժողովուրդի դէմը թուլացնելու համար՝ խլում են նրանից հողը և պարգևում բոյարներին և վանքերին և հարկերով ծանրաբեռնում նրանց։ Իրանց կեանքից դժգոհ մարդվինները մասնակցում են զանազան խռովարարների շարժումներին, սկսած Առաջին Կեղծ-Դմիտրիից մինչև Պուգաչեվ։ Իբրև խաղաղեցուցիչ միջոց՝ ռուսներն աշխատում են կռապաշտ մարդվիններին քրիստոնեայ դարձնել, գլխաւորապէս ստիպմամբ մկրտելով նրանց։ Նորադարձներն սկզբում նոր կրօնից ոչինչ չէին հասկանում. իսկ երբ մոլեռանդ կռապաշտները ջարդում էին խաչերը և պատկերները՝ այն ժամանակ նրանց դէմ զօրքեր էին ուղարկում. մեղաւորները պատժվում էին և, մինչև անգամ, սրբապղծութեան համար այրման դատապարտվում։ Ամենաթունդ հալածանքներ կռապաշտ մարդվինները կրել են պատրիարք Նիկոնից, որը, ինչպէս ասում են՝ ինքն ռուսացած մարդվին է եղել։ Մարդվինները, տեսնելով որ ապըստամբութեամբ անաջողութիւնների են ենթարկվում՝ փնտռում են այլ միջոց իրանց կեանքի ծանր պայմաններից ազատվելու։ Նրանք դիմում են գաղթականութեան հոսանքին։ Ամբողջ XVII դարի ընթացքում մարդվինների մի մասը կամաց-կամաց թողնում են իրանց երկիրը *) և դիմում դէպի Սարատովի դաշտերը, անցնում են Վոլգան (մարդվիններէն՝ Բաւ), մտնում են Սամարայի լայնածաւալ տափաստանները և տարածվում մինչև Օրէնբուրգ քաղաքը։

Պետրոս Մեծը փորձ արեց կռապաշտների վրա ազդել ուսումնարանների միջոցով։ Սիմբիրսկ մարդվինը 1723 թուականին, Պետերբուրգում, դիմում է խնդրելով սինոդին, որ մարդվին մանուկների համար ուսումնարաններ բաց անեն *)։ XVIII դարում, մարդվիններին քրիստոնեայ դարձնելու համար, դիմում էին այլ միջոցի, այն է նորադարձներին նիւթականապէս վարձատրում էին, խոստանում էին ազատել նրանց հարկերից, զինուորակոչութիւնից, կոռ ու բէկարից. յաճախ ընծայում էին դրամ և նոր հագուստ։

Ներկայ դարիս սկզբում մարդվինների մէջ երևում է մի մարգարէ, Կուզմա անունով, որը քարոզների միջոցով փորձում էր իր ազգակիցներին յետ դարձնել դէպի հին կրօնը, դէպի հին սովորութիւնները և աշխատում էր ազգայնութեան դաղափարը մտցնել նրանց մէջ։ Նա խոստանում էր հին հաւատին հետևողների մէջ հաւասար բաժանել առաջներում իրանց ձեռքից խլած բոլոր հողերը. այդպիսով, հաստատում էր նա, մարդվինները երջանկութիւն ու խաղաղութիւն կունենան այս աշխարհում։ Նոր մարգարէն կարճ ժամանակամիջոցում կարողանում է հաղարաւոր հետևողներ ունենալ. բայց այդ շարժումը շուտով դադարում է՝ երբ «մարգարէն» կալանաւորվում է և աքսորվում։

Այժմ մարդվինները բոլորովին ենթարկվել են ռուսաց կուլտուրային, բոլորեքեան յունադաւան քրիստոնեաներ են, տան նիստ ու կացը ռուսական է, թէպի և օրու գործածութիւնը սովորական է դարձել։ Ազգային ինքնուրոյնութիւնը մաքուր պահպանել են Պենզա նահանգի մարդվինները։ Այնու ամենայնիւ նրանք միշտ իրանց մարդվին են անուանում, խօսում են իրանց քաղցրահնչիւն լեզուն, թէպէտ ամենքն էլ ռուսերէն գիտեն. իսկ երբ պակվում են ռուսների հետ՝ այդ դէպքում արդէն բոլորովին ռուսանում են։

Մարդվինները հատարեա գրաւոր գրականութիւն չունեն, բայց դրա փոխարէն բանաւորը շատ հարուստ է։ Ժողովրդական երգերը, հեքիաթները, առասպելները բազմաթիւ են և իմաստալից, առաւել ևս հին երգերը, որոնց յիշում են միայն պառաւ կանայք։ Ես հետաքրքրվում էի իմանալ, արդեօք կայ մի որևէ կապ այդ հին երգերի և Ֆինլանդիայի Ֆինների նոյնանման երգերի միջև, ուստի աշխատում էի ձեռք բերել այդ երգերից մի քանիսի թարգմանութիւնը։ Ինձ աջողվեց մարդվիներէն և ռուսերէն իմացող մի ինտելիգենտ մարդու օգնութեամբ մի քանի հին երգեր գրի առնց կացնել։ Ես զարմացած մնացի դրանց թէ արտաքին ձևի և թէ ներքին իմաստի զեղեցկութեամբ, կարծես թէ տաղանդաւոր բանաստեղծի, և ոչ հասարակ ժողովրդի ստեղծագործութիւն լինէին այդ երգերը։

Մարդվինները շատ են սիրում երգել. ուստի նրանց համար խիստ ծանր էր, երբ այս տարվայ ձմեռը և գարնանը արգելված էր երգել, իբրև սուգի նշան՝ սովի ժամանակ։ Նրանք սկսեցին երգել, երբ համոզվեցան՝ որ երգելը երբէք

---

*) Մարդվինները իրանք երանց անուանում են «Էրզիա» և երանց երկիրը՝ «Էրզեան Մօդա»։

*) Երևի այս մարդու առաջարկութեամբ է տպագրված այն աւետարանը, որ իր հաշուով սինոդը հրատարակել է։ Մեր մօտ կայ մի այդպիսի աւետարան Էրզեան լեզուով և ռուսերէն տառերով (гражданскій шрифтъ) տպած։

ԴԻՐՔԻՆ. ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՄԱՄՈՒԼ

Կարելի է առանց չափազանցութեան ասել, որ եթէ մի տեղ հաւաքենք այն բոլոր գրքերը, զեկուցագրերը, լրագրական յօդուածները, տրված թէ անտիպ մնացած ուսումնասիրութիւնները, որոնք ամենապարզ կերպով ապացուցանում են, թէ նաւթային աշխարհում աշխատողների դրութիւնը պէտք է բարւոքել, այսպէս ասած՝ փոքր ի շատէ մարդկայնացնել՝—կը կազմվէր մի կոյտ, որ նաւթային իւրաքանչիւր «վիշկայի» բարձրութիւնը կունենար։ Եւ սակայն՝ անօգուտ կոյտ, փտած ու անպէտք նիւթ, որ չես իմանում թէ ինչի համար է արտադրված։ Կրիլովի խոհաբարը ոգևորութեամբ քարոզներ էր կարդում բարոյականութեան, ամօթի, խղճահարութեան մասին. բայց կատուն, որի վրա պիտի ազդէր այդ ծանրակշիռ փիլիսոփայութիւնը՝ լուռ ու մունջ նստած իր գործն էր կատարում, ոչնչացնելով խոհանոցի չաղ ու համեղ կտորները միմեանց յետևից։ Անմահ առակախօսը ունեցել է իր առջև լուռ մնացող և իր գործը շարունակող կատու. բայց ինչ կը լինէր, եթէ կատուն լուռ չը մնար, եթէ նա ինքն էլ ոգևորվէր խոհաբարի քարոզներից և մի-մի, թողնելով իր սիրուն ճաշը՝ ծափահարէր խոհաբարին, իր հիացմունքն ու աքանչացումը յայտնէր նրան և ապա էլի շարունակէր իր գործը։ Այսպիսի տիպեր երևի չեն եղել Կրիլովի օրերում. այն ժամանակ բարոյական խօսքը սուրբ էր համարվում, և յանցաւորը, հետևելով հին իմաստութեան՝ լուռ ու մունջ էր իր բանը տեսնում։ Այժմ կատուները շատ են առաջադիմել, շատ են այժ ձեռք բերել և նոյն-իսկ առիւծներ են դարձել։ Այժմ Բագուի կրեսոսը չի էլ կարմրի, երբ դուք կը սկսէք բարոյականութեան, արդարութեան նիզակներով ծակոտել նրա հաստ ու իւղոտ կաշին. նա ձեզ կը ծափահարէ, նրա հիացմունքին վերջ ու սահման չի լինի։ Բայց կատուային իմաստութիւնը կը վերանայ արդեօք։ Ահա մի նոր փաստ։ 1894 թուին, երևի այդպիսի մի հիացմունքի ժամանակ, ընդունված [illegible] Բագուի նաւթահանքերում աշխատող ծառայողների և բանուորների համար։ Ծրագիր է կազմվում, ուղարկվում է պատշաճաւոր իշխանութեան, որ և հաստատում է այդ ծրագիրը։

Գանձարանը, ինչպէս յայտնի է՝ ունէր նպատակ թեթևացնել նաւթահանքերի բանուոր և ծառայող ազգաբնակութեան կեանքի ընդհանուր պայմանները, տալով նպաստներ անդամներին և նրանց ընտանիքներին, տալով փոխառութիւններ, պաշտօնից զրկված ան-

---

տարեկան գրաւոր դրամագլուխ չունենալ. բայց այդ շարժումը շուտով դադարում է՝ երբ «մարգարէն» կալանաւորվում է և աքսորվում։

Այժմ մարդվինները բոլորովին ենթարկվել են ռուսաց կուլտուրային, բոլորեքեան յունադաւան քրիստոնեաներ են, տան նիստ ու կացը ռուսական է, թէպի և օրու գործածութիւնը սովորական է դարձել։ Ազգային ինքնուրոյնութիւնը մաքուր պահպանել են Պենզա նահանգի մարդվինները։ Այնու ամենայնիւ նրանք միշտ իրանց մարդվին են անուանում, խօսում են իրանց քաղցրահնչիւն լեզուն, թէպէտ ամենքն էլ ռուսերէն գիտեն. իսկ երբ պակվում են ռուսների հետ՝ այդ դէպքում արդէն բոլորովին ռուսանում են։

Մարդվինները հատարեա գրաւոր գրականութիւն չունեն, բայց դրա փոխարէն բանաւորը շատ հարուստ է։ Ժողովրդական երգերը, հեքիաթները, առասպելները բազմաթիւ են և իմաստալից, առաւել ևս հին երգերը, որոնց յիշում են միայն պառաւ կանայք։ Ես հետաքրքրվում էի իմանալ, արդեօք կայ մի որևէ կապ այդ հին երգերի և Ֆինլանդիայի Ֆինների նոյնանման երգերի միջև, ուստի աշխատում էի ձեռք բերել այդ երգերից մի քանիսի թարգմանութիւնը։ Ինձ աջողվեց մարդվիներէն և ռուսերէն իմացող մի ինտելիգենտ մարդու օգնութեամբ մի քանի հին երգեր գրի առնց կացնել։ Ես զարմացած մնացի դրանց թէ արտաքին ձևի և թէ ներքին իմաստի գեղեցկութեամբ, կարծես թէ տաղանդաւոր բանաստեղծի, և ոչ հասարակ ժողովրդի ստեղծագործութիւն լինէին այդ երգերը։

Մարդվինները շատ են սիրում երգել. ուստի նրանց համար խիստ ծանր էր, երբ այս տարվայ ձմեռը և գարնանը արգելված էր երգել, իբրև սուգի նշան՝ սովի ժամանակ։ Նրանք սկսեցին երգել, երբ համոզվեցան՝ որ երգելը երբէք

դանների համար համապատասխան տեղեր գտնելով, անդամների երեխաներին դպրոցներ ուղարկելով և ուրիշ բարի ձեռնարկությունների միջոցով։

Այսպես պատմված է «С.-Петер. Вѣд.» լրագրի մէջ։ Գեղեցիկ միտք, ինչ ասել կուզէ։ Բայց անցնում է ժամանակ, և մոռացված են բոլոր «բարի ձեռնարկությունները»։ Մի տարի միայն անդամավճարներ եղան, բայց յետոյ օգնության գործը կատարել անուշադրության մատնվեց. գումարվեց մասնակցողների ընդհանուր ժողով, և նախագահը, յայտնելով, որ ոչ ոք այլ ևս չէ ուզում մի բան անել այդ գանձարանի համար, մանաւանդ որ նպաստին գործի տէրերը կատարեալ անտարբերություն են ցոյց տալիս՝ առաջարկեց փակել ընկերությունը և վերջացնել բոլոր հաշիւները։ Նկատեցէք, որ իրանք նպաստադրներն են աշխատել, որ հաստատվի այդ գանձարանը, պիտի «պատուաւոր անդամներ», «ընտանեկաններ» դառնային։ Ցոդուածագիրը առաջ բերելով այդ իրողությունը՝ ասում է.

Կան փաստեր, որոնք ինքն ըստ ինքեան չափազանց պերճախօս են և քիչ են կարօտ բացատրությունների. ցոյց տուած փաստը անկասկած այդպիսիներն թվին է պատկանում։ Այն ժամանակ, երբ Եւրոպայում զանազան կազմակերպությունների միջոցով ոչ միայն ապահովացնում են բանուորների աշխատանքը, այլ և հետզհետէ դարձնում են նրանց արդիւնաբերության օգուտների մասնակից՝—մեզ մոտ, արդիւնագործական ամենահարուստ կենտրոնում, ուր երեկվայ տկլորը միլիոնատէր է դառնում՝ կատարելապէս հակառակ ուղղությունն է տիրում. ամօթ է նոյն-իսկ խոստովանելը։

Քանիներորդ դէպքն է սա, երբ ամօթի մասին է խոսվում։ Ոչ ոք չէ հաշուել և հազիւ թէ կարելի լինի հաշուել բոլոր դէպքերը։ Վաղը, անկասկած, մի ուրիշ ծրագիր դուրս կը գայ, որտեղից ծափահարությունների կարօտանայ, որպէսզի միւս օրը խլանայ։ Եւ այսպէս շարունակ—առիւծային թաթերի ծափահարություն, հիացմունքների ովկիանոսներ, իսկ գործ—ոչ մի հատ...

*

Անցեալ շաբաթ մենք ծանօթացրինք, թէ պատերազմը ինչ զգալի ազգային ինստինկտներ է ծրնեցրել նոյն-իսկ Անգլիայի պէս մի քաղաքակիրթ, առաջադէմ երկրում։ Մի բան, որ չէր [illegible] կան օրգաններն անդամ այդ զգալի ազգային հակումները կը դրուատեն, այն էլ կրօնի, քրիստոնեության անունից։ Ռուսաց «Церков. Вѣд.» թերթը բերում է մի կտոր այն յօդուածից, որ տպված է անգլիական «Եկեղեցական Ժամանակ» անունով լրագրում և որի վերնագիրն է... «Պատերազմի բարերարությունը»։

Ցանդիմանելով այն «անարիւն մարդկանց» փոքրոգությունը, որոնք ցաւում են պատերազմի հետ կապված դժբախտությունների վրա՝ «Եկեղեցական Ժամանակը» ասում է, թէ «պատերազմը զուրկ չէ և բարերարություններից։ Մենք չենք կարող չուրախանալ հէնց նոյն-իսկ իբրև քրիստոնեաներ, որ տբրանսվալեան պատերազմը ուելի ուշիղ կերպով է ներշնչում մեր ոսկի և ոչ ոսկի երիտասարդությանն այն միտքը, թէ կեանքը կռիւ է, իսկ կռիւ նշանակում է—դանակ։ Կեանքի կեղծ փիլիսոփայություններից ամենակեղծը այն է, որ ասում է թէ մենք պէտք է խուսափենք կռուից, թէկուզ հարկաւոր լինէր յաղթել չարին։ Այդ քիչ է. այն մարդը, որ կը հրաւիրէր մեզ մտաւոր կռուի, բայց սարսափով կը խուսափէր ռումբով և սուինով կռիւ մղելուց, եթէ հարկաւոր լինէր այդպիսի կռիւ՝ մի ողորմելի, թուլակազմ մարդ է, որը, պէտք է յուսալ, շուտով դուրս կը մղվի կեանքից այն օրէնքով, որ միայն ամենից շատ ընդունակներն են անընդունակներից շատ ապրում։ Գուցէ իրաւունք ունէր Էմպէդոկլը, հաստատելով թէ «կռիւը բոլոր իրերի մայրն է», թէ սէրն ու ատելությունը, գողությունը և յետ մղումը, պառակտումը և կենարարությունը՝ հակադիր երկուորեակներ են, որոնց ընդհարումից ծնվում է առաջադիմություն բարձր կեանքի մէջ... Ինքը Տէրը ասաց, թէ նա եկել է բերելու ոչ թէ խաղաղություն, այլ սուր։ Այս սուրը, սակայն, պիտի լինի Տիրոջ և Գեդէոնի սուրը—չարության մոգիական ոյժերի դէմ։ Եթէ նա նահատակներ է առաջացնում՝ մենք պիտի լինենք, թէ ուր չը կան նահատակներ՝ այնտեղ հերոսներ էլ չը կան»։

Այս բոլորը շատ լաւ։ Բայց կարող է ասել եկեղեցու պաշտօնեան, թէ այդ մեծահնչիւն բառերը, բարձր զգացմունքները, տիեզերական օրէնքները կարելի է շահագործել և այն դէպքում, երբ մի բուռն դրամատէրերի գծած օգուտների համար անգլիական առիւծը թաթ է դնում մի փոքրիկ ժողովրդի ազատության վրա, մի ժողովրդի, որ նոյնպէս գիտէ, թէ ինչպէս է ասել Քրիստոս, նոյնպէս պաշտում է այն սկզբունքները, որոնք այնքան թանգագին են չովինիստության շուրջը ծածկած անգլիացի հոգևորականների համար...

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Դեկտեմբերի 12-ին

Այսօր տեղի ունեցաւ հանգուցեալ Թադէոս Թամիրեանցի թաղումը, Ղազանչեցոց եկեղեցու բակում։ Զը նայած նմանը չը տեսնված սառնամանիք [illegible] թիւնը յարգել էին հազարաւոր մարդիկ ամեն դասակարգից, հարուստ ու աղքատ, մեծ ու փոքրը, այր և կին։ Աչքի էին ընկնում բաւական թիւով պաշտօնատար անձինք։ Մեր դրացի թուրքերը հարիւրներով լցվել էին եկեղեցին՝ իրանց հոգևոր ներկայացուցիչներով և ականաւոր քաղաքացիներով։

Հանգուցեալ բարերարի դագաղը ուսերի վրա տարան։ Առջևից գնում էին հայ և թուրք հոգևորականությունը, ապա դագաղին հետևում էր ծովացած ամբոխը տասն և չորս հազարի պսակներով։

Համբարձների ինդիրքը, դրօշակներով պատել հանգուցեալին՝ իշխանությունը մերժեց, այդ պատճառով նրանք պսակներով պատեցին։ Պսակներ դրեցին քաղաքի կողմից, թուրք հասարակությունից, վեց համբարներից, յարգողներից և ծանօթներից։

Վեհափառ Կաթողիկոսը իր կողմից ներկայացուցիչ ունէր Տիրայր վարդապետին, որը պատարագիչ էր և դամբանական խօսեց։

Ինչպէս նախորդ նամակով յայտնել էի, հանգուցեալը միլիոնատէր լինելով՝ ամուրի և անզաւակ մեռաւ. չունէր և կտակ։ Հանգուցեալի բարեկամները հետևեալ գումարները նուիրեցին զանազան հաստատություններին. Թեմական դպրանոցին՝ 3000 ր., բէալական դպրոցին՝ 1000 ր., Մարիինսկի օրիորդաց և ռուս-թրքական ուսումնարաններին իւրաքանչիւրին՝ 500 ր., Բագրատի մանուկների ինամատար ընկերությանն 1000 ռուբլի։ Խօսվեց և այն տասը հազար ռուբլու մասին, որ հանգուցեալը ուղարկել է Պարսկաստան Արամեան ընկերությանն, որ մի դպրոց կառուցանվի հանգուցեալի յիշատակին։

Արցախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ շուտով վերջնականապէս կորոշվի անմնացորդական կոմիտեի անդամների կազմությունը և կոմիտեն կը սկսի իր կանոնաւոր գործունէությունը։ Բոլոր այն անձինք և հիմնարկությունները, որոնք ցանկանում են նպաստել մեր արհեստագործության զարգացման՝ կարող են դիմել կոմիտեին թէ խորհուրդներ ստանալու և թէ որևէ ձևով աջակցություն ցոյց տալու նպատակով։

—

Զանազան տեղերից ստացված լուրերը և տեղեկությունները ցոյց են տալիս, որ գիւղերում և դաշտերում ձիւնը շատ վնասներ է տուել։ Մեծ ձիւնի պատճառով վնասվել են թէ ճանապարհորդներ, թէ ձիեր և լծկան անասուններ, իրանց կառքերով և սայլերով։ Ձիւնի տակ մնացել են և սառել մարդիկ, անկարող լինելով հասնել իջևանները։ Հաղորդակցության բացակայության պատճառով շատ կայարաններ և ավայի տեղերում մնացած խանութներ մնացել են առանց հացի։ Պօստային հաղորդակցությունը մի քանի տեղերում ընդհատվել է ամբողջ շաբաթով։

—

Վերջին ժամանակներս նաւթի չափազանց թանգանալը, «Кавказъ» լրագրի ասելով, տեղիք է տուել Թիֆլիսի տեղական վարչության միջամտության։ Լրագրի ասելով, վարչությունը մէկ նաւթարդիւնաբերողից ձեռք է բերել մի քանի ցիստերն նաւթ և մտադիր է ծախու հանել քաղաքի զանազան մասերում, որպէսզի կարողանայ նաւթի գինը իջեցնել մինչև չորս կոպէկ ֆունտը։

—

Ստացանք Շիրվանզադէի «Մելանիա» վէպիկը, որ պատկանում է «Աղբիւր-Տարազի» հրատարակությունների շարքին։ Գրքոյկը բաղկացած է 112 փոքրագիր երեսներից։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներկայումս հետախուզություն է կատարվում՝ Տաշկենտը Օրէնբուրգի հետ երկաթուղիական գծով միացնելու նպատակով։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Ալէքսանդրոպոլից մօտաւորապէս 23 վերստ հեռաւորության վրա գտնվող Ղուլիջան գիւղից մի խումբ հարսնաւորներ գնում են Քեսափանակ գիւղը՝ այնտեղից հարս բերելու։ Ցանկարծ սաստիկ բուք է բարձրանում հէնց Քեսափանակի մօտերքում. ձիաւոր հարսնաւորները կարողանում են շուտ հասնել յիշեալ գիւղը, իսկ ոտաւորները յետ են մնում։ Օրը արդէն տարաժամ լինելով՝ նրանք ոչ բարգելք են լինում և գիշերը դուրսն են մնում։ Առաւօտեան նրանց դիակները գտնում են սառած և մի տեղ ժողոված, առաջներին օղու չլերը և բաժակները դրված։ Այդ դժբախտները թողել են բազմաթիւ որբեր»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մշակի» № 229-ի մէջ Բաթումի քահանայական ինդրի առիթով այստեղի հասարակության կողմից էջմիածին ուղարկած հեռագրի պատասխանը նորերս ստացաւ Բաթումի եկեղեցու երէցփոխ պ. Ս. Յարությունեանց։ Ահա պատասխանը. «Կոստանդին քահանան ծխատէր քահանայ չէ նշանակված, այլ Վեհափառը հրամայել է նպաստ տալ նրան եկեղեցական եկամուտներից, ինչպէս պատուիրված է կոնդակով թեմական առաջնորդին, որպիսի կոնդակը և պէտք է կատարել։ Հեռագիրը կրում է դիւանապետ Կորիւն վարդապետի ստորագրությունը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՈ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Սեպտեմբերից մինչև մարդոց ուշադրությունը դարձված է օդանաւային զօրքերի վրա, մանաւանդ որ պատերազմական բեմից ոչինչ նոր տեղեկություններ չեն ստացվում, յաճախայն դէպս մինիստրությունը նրանց չէ հրատարակում։ «Daily News» լրագիրը հաղորդում է, որ թէպէտ միլիցիան ամբողջապէս չի գործադրվի Եւրոպայից դուրս ծառայության համար, բայց նրա միջից ճարպիկ և փորձված մարդիկ կուղարկվեն Հարաւային Աֆրիկա։

Ուրիշ տեղեկությունների համեմատ՝ Լոնդոնի վերստ ճանապարհ է կտրում, որ ներկայ գտնվի պատարագին։ Նա երբէք կիրակի օրը չի աշխատի, մինչև անգամ երբ իր հասած արտերի ցորենը թափվելիս լինէր. ոչ մի դրամական վարձատրություն գիւղացուն դաշտը չի ուղարկի. բայց երբ կալուածատէրը կամ մի հարուստ գիւղացի կիրակի օրը վարձաղրամի փոխարէն օղի է առաջարկում՝ բոլորեքեան ուրախությամբ հունձի են գնում. այս դէպքում մեղք չէ համարվում աշխատելը։

Բացի երկրագործությունից մարդվինները ուրիշ գործով համարեա չեն զբաղվում։ Առաջները նրանք պարապում էին դարբնությամբ, բայց թողնում են այդ արհեստը, երբ խառը ժամանակներում, քաղաքական նկատումներից ստիպված՝ կառավարությունը արգելում է տեղիս այլազգիներին այդ արհեստը բանացնել։ Մարդվինները հմուտ ջուլհակներ էին. այժմ էլ գործում են քաթանի կտաւներ, բայց գործարանական ջիթերի էժանությունը կամաց-կամաց մեռցնում է այդ ինքնագործությունը և գիւղացու ապրուստի աղբիւրներից մէկը չորացնում։ Առաջները գիւղացու հագուստը կինն էր պատրաստում. մարդվին կնոջ ազգային հագուստի ասղնագործությունը նրա շնորհալի ձեռքի արդիւնքն էր։ Այժմ էլ տեղ-տեղ կարելի է տեսնել այդ հագուստը (շուշպան), կարած սպիտակ քաթանի կտորից. շուշպանի օձիքը, կուրծքը, փէշերի եզերքը և թևերը, նոյնպէս և գլխարկը, ասղնագործած են գլխաւորապէս կարմիր (բօրդօ) և սև բրդէ թելով *)։

Մարդվինների մէջ շատ արհեստներ դարբնության նման մոռացության են տրված կամ անհետանալու վրա են։ Ներկայումս եղած պարապմունքները երբէք չեն բարգրվում. չեն մտցնվում նրանց մէջ այնպիսի նոր ձեռնարկություններ, որոնք կարողանային նպաստել տնտեսական բարեկեցության։ Պապերից սովորածը ձեռքից գնում է, իսկ սրա փոխարէն նորը չեն սովորում։ Այդպիսով մանկան ընթացքում եկամուտները պակասում են և նոր պահանջների ճնշման տակ՝ ծախսերը շատանում։ Այդ է պատճառը, որ առատ տարիներում գիւղացին անկարող է լինում սև օրվայ համար մի բան յետ ձգել. իսկ երբ անբերրիությունը վրա է հասնում, նա վիզը ծռած կողմնակի օգնության է սպասում։ Եթէ պետական և հասարակական բարեգործությունը չը լինէր՝ տեղիս ազգաբնակությունը բոլորովին կը կորչէր։ Կարմիր Խաչը գիւղացիներին հաց էր բաժանում մինչև նոր հունձը։ Քիչ օգուտ չը հասցրեց և «Սամարայի մասնաւոր ընկերությունը»։ Այս ընկերությունը բաւականին լաւ կազմակերպված և աջող գործունէություն ունէր, որ պատիւ է բերում նախաձեռնողներին։ Ամեն մի գիւղում աշխատում էին երկու կամ ուելի անձինք, գլխաւորապէս ինտելիգենտ կանայք և օրիորդներ, որոնք ուրախությամբ եկել էին քաղաքներից, նոյն-իսկ Մոսկվայից և Պետերբուրգից, օգնելու կարօտեալ ժողովրդին։ Ընկերությունից նրանք ստանում էին թեթև ռոճիկ, այնքան միայն, որ կարողանան գիւղում ապրել. ունևորներն այդ ռոճիկն անգամ չէին ստանում։ «Ընկերությանն» գործունէությունը ուելի բազմազան էր։ Գիւղական երեխաների համար ճաշարաններ էին բացում, աղջկերանց սովորեցնում էին կար ու ձև և ձեռագործ. բուրդ էին գնում ու կանանց բաժանում՝ թել մանելու համար. բժշկական օգնություն էին հասցնում. իսկ երբ դաշտային աշխատանքը սկսվեց՝ փոքրիկ երեխաների համար «մսուրներ» էին սարքում։ Մանողները դաշտը աշխատանքի գնալով, տանն են թողնում մանր երեխաներին առանց խնամքի. յաճախ տեսնում ես, թէ ինչպէս 5—6 տարեկան երեխայի յանձնում են մի քանի ուելի փոքրիկ, մինչև անգամ ծծկեր մանուկներ։ Ամառվայ ընթացքում զանազան փորձանքներ անպակաս են լինում այդ անխնամ երեխաներից. ընկնում են ջրհորը, փղոցի փոշու մէջ, արևի տակ հիւանդանում են, սոված-ծարաւ են մնում. պատահում է մինչև անգամ, որ երեխաները անզգուշությամբ հրդեհում են խրճիթը։ Հասկանալի է ուրեմն, թէ որքան օգտակար են ընկերությանն բացած մսուրները։

Տգէտ ժողովուրդը սկզբում կասկածանքով էր վերաբերվում դէպի այդ գործիչները, նրանց մի տեսակ Նեռի, Դեքաքրիստոսի տեղ էր ընդունում։ Դարերով ամենից մոռացված մարդու համար անհասկանալի էր, թէ ինչպէս կարելի է, որ օտարը, այն էլ մի «տիկին» կամ մի «պարոն», ձրի, առանց յետին միտք ունենալու, գիւղացուն հաց տար, նրա երեխաներին պահէր, բժշկական օգնություն հասցնէր հիւանդացածներին։ Բայց յետոյ տեսնելով այդ մարդկանց անկեղծ վերաբերմունքը դէպի ճնաված ժողովուրդը՝ բոլորովին միամտվում են և այլևս դիմադրություն չեն ցոյց տալիս։ Վերջը, երբ «կերակրող» օրիորդները, իրանց գործը վերջացրած, թողնում էին գիւղը՝ պէտք էր տեսնել, որպիսի քնքշությամբ էին նրանց «բարի երթ» մաղթում գիւղացիները։ Գիւղի բոլոր կանայք ճանապարհ էին ձգում նրանց, մի քանի վերստ գնալով նրանց յետևից, լալիս էին, պաղատում էին նորից վերադառնալ... Գիւղացին լաւ է իմանում, թէ ով է իր բարերարը։

Ք. Օ.

*) Մեկնոյն օրը միևնոյն ձևով ծնում են և Ֆինլանդիայի փիները։

*) Ես հաւաքել եմ մի քանի նմուշներ այդ ասըղնագործությունից, որի նկարները զարմանալի նմանություն ունեն փիների և մեր թարաքամների դոբուածքների նկարների հետ։

հարուստ կալուածատէր լորդ Զկշէմին, որը բոմիսարի աստիճանով 1879 թուին հրաժարական տուեց ծառայութիւնից, յանձնարարված է կազմակերպել մի զօրաբաժին 3000 եօժէններից, Կապանդիա ուղարկելու համար: Հեծեալ եօժէնները կամաւորապէս են ծառայում և գլխաւորապէս բաղկացած են մանր ֆէրմէրներից, կառքեր պահողներից և ուրիշ մարդկանցից, որոնք ծառայութեան են մտնում իրանց ձիերով: Թշնամու յարձակման կամ ապստամբութեան դէպքում՝ եօժէնները կարող են մշտական ծառայութեան մէջ մտնել, բայց մինչև այժմ նրանց չէր կարելի գործ դնել Անգլիայից դուրս: Լորդ Զկշէմ այսօր պէտք է ճանապարհ ընկնէր Հարաւային Աֆրիկա նոյն շոգենաւով, որով գնում են և նոր գլխաւոր հրամանատար Բօքէրտոն և 6-դ զօրաբաժնի հրամանատար գեներալ Կէլլի-Կէննի: Կամաւորներին ծառայութեան մէջ ընդունելու ժամանակ ուշադրութիւն կը դարձնվի փորձված հրացանաձիգների վրա: Ասում են, որ կամաւոր զինուորներին կանչելը մեծ ոգևորութիւն առաջացրեց երիտասարդ վաճառականների և արհեստաւորների մէջ, որոնք հազարաւոր խմբերով գալիս են և խնդրում զօրքերի շարքերը մտնել:

Ինչ վերաբերվում է կօլոնիաներից ուղարկվելիք օգնական զօրաբաժիններին՝ «Daily News» լրագրի խօսքով Հնդկաստանի զօրքերի գլխաւոր հրամանատար սըր Վիլիամ Լօկգարտ պատրաստականութիւն յայտնեց տալ Հարաւային Աֆրիկայի համար զինուորների չորս գունդ և մի թընդանօթաձիգ բրիգադա: Աւստրալիական կօլոնիաները տալիս են 1000 հեծեալ զինուորներ, որոնցից 400 մարդ Նոր Հարաւային Ուէլսից, 300 —Վիկտորիայից, 150—Կվինսլենդից, 100—Առէլայդից, 50—Արևմտեան Աւստրալիայից:

Անգլիական լրագիրները հաղորդում են, որ պատերազմական բեմից ստացվող տխուր լուրերը սաստիկ վշտացնում են Թագուհուն, և երկիւղ են կրում, որ նրա առողջութիւնը չը վնասվի: Թագուհին իբր թէ ասվում է հաստատել պատերազմին, և այն էլ այն ժամանակ, երբ նրան հաւատացրել են, թէ պատերազմական գործողութիւնները շուտով կը վերջանան:

«Times» լրագրի զինուորական թղթակցի հաշուով, գեներալ Բուլլէրն ունի 17,500 հետևակ զինուորներ, երկու հեծելազօր գունդ, թնդանօթաձիգ զօրքի եօթ բատարէա և 8 նաւային թնդանօթներ. (այդտեղից պէտք է հանել այժմ Կօլէնզօի մօտ խլված 11 թնդանօթները): Եթէ դրա վրա աւելացնենք 4 հազար հեծեալ—հետևակներին և գաղթականական զօրքերը, նոյնպէս և Լէդիսմիթի բերդապահ զօրքը՝ այն ժամանակ անգլիական պատերազմական ոյժերը 30 հազար մարդուց չէ անցնում: Եթէ Լէդիսմիթի և Կիմբերլէյի բերդապահ զօրքերը կարողանան էլի մէկ ամիս դիմանալ՝ այն ժամանակ կարող են դեռ աղատվելու յոյս ունենալ, բայց եթէ այդ նրանց չաջողվի՝ Ուայտ ստիպված կը լինի բերդից ուժով դուրս գալու փորձ անել Բուլլէրի հետ միանալու համար, իսկ Կիմբերլէյ հարկադրված կը լինի անձնատուր լինել բօէրներին:

Պատերազմի սկզբից անգլիացիների կողմից սպանված, վիրաւորված և գերի տարվածների ընդհանուր թիւը 7630 մարդ է:

Շատ հետաքրքիր է անգլիական մամուլի ընթացքը ներկայ հանգամանքներում: Զինդոյական լրագիրների պարագլուխները խիստ կերպով յարձակվում են գեներալների վրա, որոնց նրանք մեղադրում են անընդունակութեան և անզգուշութեան մէջ: Մի քանի արմատական լրագիրներ, որոնք առաջ պատերազմի դէմ էին, այժմ ասում են, թէ անհրաժեշտ է ամեն ջանքեր գործ դնել՝ պատերազմը ցանկալի վախճանին հասցնելու համար: Բայց նրանք այն էլ աւելացնում են, որ պատերազմը վերջանալուց յետոյ թէ Զէմբերլէյնը և թէ կառավարութիւնը պատասխանատուութեան պէտք է հրաւիրվեն:

«Times» լրագիրը այսպէս է վերջացնում այժմեան դրութեան իր տեսութիւնը. «Մենք կարող ենք երես առ երես նայել փաստերին, չը չափազանցացնելով և չը նսեմացնելով նրանց: Մենք շատ լաւ հասկանում ենք, որ այժմ մենք պէտք է կուենք ոչ միայն մեր գերիշխանութիւնը պահպանելու համար Հարաւային Աֆրիկայում, այլ և մեր դրութիւնը պահպանելու համար որպէս մեծ պետութեան: Մենք տեսնում ենք այժմ, որ վատ ենք հաշուել մեր թշնամու ոյժերը: Մենք չենք ցաւում մեր անաջողութիւնների մասին, որովհետև գիտենք, որ Անգլիան, ինչ էլ որ պատահի՝ կը կարողանայ կրկին բարձրանալ»:

ՆԱՄԱԿ ՇՎԷՑՑԱՐԻԱՑԻՑ

Ժընէվ, դեկտեմբերի 16-ին

Այսօր հարկադրված եմ հաղորդել ձեզ մի թիւնը—ասում է Դրօ, իշխան Բիսմարկին ուղղած մի պատասխանագրի մէջ—միմիայն եւրոպական դիպլոմատիայի ցանկութիւնը չէ, այլ որովհետև այդպէս է կամենում և շվէյցարական ժողովուրդը: Համաձայնեցէք, որ հեշտ բան չէր կռուել Բիսմարկի նման մի «գազանի» դէմ, այն էլ յանուն փոքրիկ մի ազգի...

Կարելի է համակարծիք չը լինել Դրօի բոլոր մտքերին, և նոյն-իսկ նրա նախկին դաշնակիցներից շատերը, որոնք մի ժամանակ գործում էին նրա հետ արմատական կուսակցութեան մէջ՝ դարձել էին նրա քաղաքական անհաշտ հակառակորդները. բայց դա չէ արգելում բոլոր կուսակցութիւններին խոստովանել, որ նոր անշնչացած մարդը՝ իր ժողովրդին նուիրված մի եղական քաղաքացի էր, որ ծառայեց հայրենիքին անկեղծ սիրով, անսովոր տոկունութեամբ, աշխատելով անընդհատ, գիշեր և ցերեկ, անվերջ փոթորիկների մէջ...

Պատրաստվում է չքեղ, ժողովրդական մի թաղում, որ տեղի պիտի ունենայ երեք օրից յետոյ՝ Նիւշատելում: Առանց իմ գրելուն էլ, դուք կարող էք գուշակել, որ այդ օրը ամբողջ Շվէյցարիան՝ վշտով, բայց միաժամանակ և խորին պարծանքով գլուխ կը խոնարհեցնէ՝ աշխատանքի, տաղանդի և տոկունութեան առաջ, որ այնպէս ներդաշնակ կերպով միացնում էր իր մէջ այդ նշանաւոր բանուորը...

Խ. Մալումեան

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Morning Post» լրագիրը, որը Վիկտորիա թագուհին գերադասում է ուրիշ լրագիրներից և միշտ կարդում է՝ կռուի նախընթաց օրը, ի մէջի այլոց, գրել էր. «Բուլլէրի յարձակման պէտք է սպասած ամեն մի բոպէ, և հէնց որ սկսվեց այդ յարձակումը՝ այն բոպէից ամբողջ պատութեան ճակատագիրը կախված կը լինի այդ հրամանատարի գործունէութիւնից: Շատերը, հաւանական է, որ այս խօսքերը չափազանցութիւն համարեն. բայց եթէ ի նկատի առնենք Լէդիսմիթի մօտ տեղի ունեցած կռիւը և ենթադրենք, որ այս դէպքում յաղթութիւն կարող է տանել մէկ կամ միւս կողմը՝ այն ժամանակ կերևայ, որ մեր խօսքերի մէջ ոչինչ չափազանցութիւն չը կայ: Բօէրների տարած յաղթութիւնները բրիտանական ոյժի վրա դցեցին ոչ այնքան բարենպաստ լոյս: Պետութիւնից դուրս մենք բարեկամներ չունենք: Այդ պատճառով էլ կառավարութիւնը պարտաւոր է իր ոյժը մեծացնել, և ամենից առաջ նա անմիջապէս պարտաւոր է պատերազմական դրութեան մէջ դնել Նատալի բոլոր նաւերը: Մենք հաւատացած ենք, որ օտար միջամտութիւն տեղի չի ունենայ. բայց կարող է այդ պատահել, և այն ժամանակ ինչ կը լինի մեր դրութիւնը, եթէ այդ բանը պատահի և մենք պատրաստ չը լինենք»:

—«Standard» լրագիրը ասում է, թէ հնդկական զօրքերը անհնարին է Հարաւային Աֆրիկա ուղարկել, ընդհակառակը պէտք է աւելի ուժեղացնել Հնդկաստանի զօրքերի թիւը, որովհետև իրանք հնդիկները ամեն մի բոպէ պատրաստ են ապստամբվելու բրիտանական կառավարութեան դէմ:

—Թիւրքաց կառավարութիւնը պահանջեց Փերանսիական դեսպանութիւնից, որպէսզի Մահմուդ փաշան, հէնց որ Մարսէյլ հասնի՝ անյապաղ ձերբակալվի և Թիւրքիա ուղարկվի, որովհետև նա մեղադրվում է սուլթանի կեանքի դէմ դաւադրութեան մէջ: «Times» լրագրի խօսքով՝ ոչ ոք չէ հաւատում այդ դաւադրութեանը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: 14 դեկտեմբերի: Երեկոյեան մեկնեցին դէպի Մոսկվա՝ Մեծ Իշխան Սէրգիյ Ալէքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Ելիզավետա Ֆէոդորովնա:

ՄՈՍԿՎԱ: Այսօր կոմս Լ. Ն. Տոլստոյի ցաւերը վերսկսվեցին:

ԼՕՆԴՕՆ: «Daily Telegraph» լրագրին հաղորդում են Զիվէլէյ'ի մօտ գտնվող բրիտանական բանակից, դեկտեմբերի 7-ից. «Այսօր մեր թնդանօթաձիգ զօրքը ռմբակոծեց բօէրների հողային ամրութիւնները. հետևակների համար կառուցված կամուրջը քանդեց, այնպէս որ այն բօէրները, որոնք կանգնած են իրանց սայլերով և թնդանօթներով գետի այս կողմը՝ կը դժուարանան անցնել միւս կողմը»:

«Times» լրագրի ասելով՝ կառավարութիւնը ցանկալի չէ համարում Հնդկաստանից նոր զօրք պահանջել, եթէ միայն անհրաժեշտ դժուարութիւններ չը ծագեն:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործ.»: Բարձրագոյն դատարան: Ընդհանուր պրոկուրորը սկսում է մեղադրական ճառը կարդալ: Նա յայտնում է, որ հրաժարվում է մեղադրել Շեվալիին, Ֆրէյսինկուրին, Բուրմանին, Բալիերին և Կայլիին:

15 դեկտեմբերի

ՊՐԷՏՕՐԻԱ, 5 դեկտ. «Ռէյտէրի գործ.»: Գենեբալ Թուրէր առողջացաւ և վերադարձաւ բանակը:

ԿԱՊՇՏԱԴՏ, 7 դեկտ. «Ռէյտէրի գործ.»: Այն լուրը, թէ ջրի պակասութեան պատճառով բօէրները Սարամբէրգից հեռացան՝ չէ ստուգվում: Գատէկրի զօրքերի մէջ փորլուծութիւնը սաստկանում է:

Զիվէլէի մօտի բանակից հեռագրում են դեկտ. 7-ից, թէ անգլիական նաւային թնդանօթները այսօր ռմբակոծում էին խճուղու կամուրջը Կոլէնզօի մօտ և նրան բոլորովին կործանեցին:

ԿԱՊՇՏԱԴՏ, 8 դեկտ. «Ռէյտէրի գործ.»: Մի քանի պատերազմական թղթակիցներ այսօր յետ դարձան Մոդդէր-Ռիվէրից. սրանից եզրակացնում են, թէ Մէթուէն դիտաւորութիւն չունի յարձակողական դիրք բռնելու:

ԼՕՆԴՕՆ. Կապշտադտից դեկտ. 13-ից ստացվել է պաշտօնական տեղեկութիւն, թէ Մոդդէր-Ռիվէրում ոչ մի փոփոխութիւն չը կայ: Մէթուէն լաւ պատսպարուել է խրամատներով: Գատէկր հաղորդում է, որ 150 ոստիկանական զինուորներ գրաւեցին Դօրարէխտ: Բօէրները յետ քաշվեցին:

ԴՈՒՐԲԱՆ: «Ռէյտէրի գործ.»: Նորվէգիական «Regina» նաւը, որ Նաւայից էր գալիս բեռներով երկաթուղիների համար՝ Դէլագօա ծովածոցի մօտ բռնված է անգլիական պատերազմական նաւից և բերված է Դուրբան:

ԼՕՆԴՕՆ: «Ռէյտէրի գործ.», Զինուորական մինիստրութիւնը հրատարակեց մի հեռագիր, Պիտերմարիցբուրգից ուղարկված դեկտ. 12-ին, թէ դեկտ. 10-ին Լէդիսմիթի մօտ տեղի ունեցաւ կռիւ, որի մէջ վիրաւորված են 5 սպայ և 10 զինուոր, և սպանված են 9 զինուոր:

ԿԱՊՇՏԱԴՏ, 8 դեկտ. «Ռէյտէրի գործ.»: Օրէցօր աւելանում են ապացոյցներ մի ընդարձակ ապստամբական շարժման մասին Կապի գաղթականութեան մէջ: Շարժումը մասնակից են Կապի պարլամենտի երեք անդամներ: Նրանցից մէկը 200 հոգու ներկայութեամբ մի սպայի յանձնեց Օրանժեան հասարակապետութեան դրօշակը և յոյս յայտնեց, թէ նա կառաջնորդէ դէպի փառք և յաղթութիւն: Միւս անդամի մասին հաստատում են, թէ նա աշկարայ խօսում է յոգուտ թշնամիներին, իսկ երրորդ անդամի որդուն և աղջկանը տեսել են՝ յայտնի կերպով Օրանժեան հասարակապետութեան դրօշները կրելիս: Նոյնը պատմում են և շատերի մասին: Տարածվում են դեռ չը ստուգված լուրեր, իբը թէ Միացեալ-Նահանգների զանազան մասերում ֆէնիանների մէջ գոյութիւն ունի մի կազմակերպված շարժում, որ նպատակ ունի ներս խուժել դէպի Կանադա և սրանով օգնել բօէրներին:

ՆԻՒ-ԵՕՐԿ: «Journal» հաւատացնում է, թէ ստատս-սեկրետար Գէյ յայտնել է Պաունէֆոտին, թէ ինքը ամեն ջանք գործ դրեց Միացեալ Նահանգների չէզօքութիւնը պահպանելու: Լրագիրը աւելացնում է, թէ Պաունէֆոտ հեռագիր ուղարկեց Լօնդոն, որով պնդում է, թէ անհրաժեշտ է պաշտպանել Կանադայի սահմանները:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, «Ռէյտէրի գործ.»: Արտաքին գործերի մինիստրութեան մէջ ոչինչ յայտնի չէ ֆէնիաների որևէ շարժման մասին, որ նպատակ ունենար ներս խուժել Կանադա: Կարծում են, թէ այս լուրերը հնարված են՝ Կանադան ահաբեկելու համար, որպէսզի նա զօրք չը ղրկէ Աֆրիկա:

ՄՈԴԴԷՐ-ՐԻՎԷՐ, 9 դեկտ. «Ռէյտէրի գործ.»: Զանազան տեղերում այսօր անընդհատ թնդանօթաձգութիւն տեղի ունի երկու կողմից ևս: Բօէրների ռումբերը տեղ չեն հասնում:

ԼԻՍԱԲՈՆ, «Հաւասի գործ.»: Օպօրտոից եկած մի զինուոր հիւանդացաւ ժանտախտով Լիսաբոնի զօրանոցում: Այս զինուորը և բոլոր վայրը փոխադրված են զինուորական հիւանդանոցը:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործ.»: Դէլ'կասսէ Ֆրանսիայի դեսպանից Պեկինում ստացաւ տեղեկութիւն, թէ Ֆրանսիայի բոլոր պահանջները բաւարարութեան մասին՝ լիովին կատարված են:

ՊԱՐԻԶ, «Հաւասի գործ.»: Բարձրագոյն դատարան: Բիւֆֆէ և Կայլի բարձրաձայն բողոքեցին մեղադրական ճառի ժամանակ, որի պատճառով նրանց դուրս հանեցին դահլիճից: Վաղը մեղադրական ճառը կը շարունակվի:

ՕԴԵՍԱ: Ափերի մօտ սառոյցի հաստութիւնը երեք քառորդ արշին է: Ռուսաց ընկերութիւնը դադարեցրեց Խրիմ-Կովկասեան նաւադնացութիւնը Օդեսայից: Մինչև որ նաւահանգիստը սառոյցից մաքրվի՝ այս գծի նաւադնացութիւնը տեղի կունենայ Օդեսայի և Սեվաստոպոլի մէջ:

«Կայսր Աղէքսանդր II» շոգենաւը օգնութեան

է ուղարկված «Օլ'գա» շոգենավն, որը փոթորիկը ձգել էր Սինոպ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտ. 14-ին դեպի Տրանսվաալ ուղևորվեց ռուս-հոլանդական բժշկա-առողջապահական խումբը, որ կազմակերպված է աւելի քան հաթիւ հազար ռուբլի նուէրներով, հոլանդական պատուոր Գիլլոտի նախաձեռնութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենեբական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ։
Ի. Ֆ. ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¼—2 ժ. ներքին հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ի. Ֆ. ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇԳԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վենեբական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—քիմական և խոշորացուցական հետազօտութիւնն ժէկի, խիի և արեան։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Հաւախորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. ԱՌՎԱՆԻՑԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
64—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԵԳԵՎԱՆՈՎԻ
Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից։
Առաւօտները՝
Վ. Ի. ՃԻՃԻՆԱՁԷ—ատամների հիւան. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՈՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Դ. Կ. ԷՐԻՍԹՕՎ—վիրաբուժութեան. 10—12 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օր. 10½—12 ժ.
Ա. Ն. ՇԱՏԻԼՈՎ—աչքի հ. 12—1 ժ.
Ն. Զ. ՈՒՄԻԿՈՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12½—1½ ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԴՈՎ—վենեբական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՈՎ—նեարդային և ելեկտրոտերապիա, 1—2 ժ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—ականջի, կոկորդի, քթի հ. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ օր. 2—3 ժ.
Երեկոները՝
Դ. Ա. ԳԷԴԷՎԱՆՈՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.
Ս. Ի. ՎԱՑԱՁԷ—ներքին հ. և մասսաժ, 6—7 ժ.
Հիւանդանոցում գտնվում են մշտական մանճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմական հետազօտութիւնների համար։
Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով։
Նիկոլաևսկայա փողոց, Վօրոնցովի արձանի հանդէպ, տ. Սագինովի, № 11.
Հիւանդանոցի վերատեսուչ՝
14—20 Միխայիլ Գեդեվանով

ՄԻ ՀՄՈՒՏ ՀԱՇԻԱՊԱՀ
օժտված բազմաեայ փորձառութեամբ, ցանկանում է պաշտօն ստանալ. Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը։ (Ե. շ.) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ դեկտեմբեր ամսի 23-ին, ցերեկվայ 1 ժամին, վարչութեան մէջ նշանակված է աճուրդ, քաղաքային ագիշանների յիսուն սիւների վրա յայտարարութիւններ կպցնելու իրաւունքը կապալով տալու համար։
Պայմանները կարելի է տեսնել վարչութեան 4-դ բաժանմունքում ամեն օր առաւօտեան ժամի 10-ից մինչև 2-ը, կէսօրից յետոյ։
2—3

ԲԺԻՇԿ Գ. Գ. ՄԵԽՐԱԲԵԱՆ
Ընդունելութիւն բերանի խոռոչի և ատամների հիւանդութիւնների։ Ամեն օր 10—2 ժամ առաւօտեան և 4—7½ ժամ երեկոյեան. իսկ կիրակի օրերը՝ 10—2 ժամ։ Վերեսմինեան փողոց, տուն № 2, երկրորդ ժամը Երևանեան հրապարակից։
(Ա. հ. շ.) 4—10

Թիֆլիսի Ժողովարան
Ուրբաթ օր, դեկտեմբերի 17-ին, նշանակված է ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ։ Հիւրերը ժամի հաւար վճարում են—զինուորականները մի բուբլի, իսկ մնացածները 2 բուբլի։ Դիմակ ունեցողները առանց վճարի։ Ներկայնները բոլոր պարողների համար անհրաժեշտ են, որոնցից զինուորականները պարտաւոր են լինել նշանագիտով, իսկ ոչ-զինուորականները—փրակով, կամ սև հագուստով։ Տեղացիները կարող են լինել ազգային հագուստով։ Զը պարողներ։ պէտք է լինեն,—զինուորականները սիւրտուկներով, իսկ ոչ-զինուորականները սև զգեստով։ Սկսվում է երեկոյեան 9½ ժամին, իսկ վերջը գիշերվայ 3 ժամին։
(14, 17) 2—2

ՆՈՐԱՇԵՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ եկեղեցու գաւթում նշանակված է աճուրդ, դեկտեմբերի 16-ին, առաւօտեան ժամի 11-ին, նոյն եկեղեցուն պատկանող կրպակի և կից սենեակների, որոնք գտնվում են 5-րդ քաղաքամասում, Վինեայա փողոցում։
Սրբազան՝ Նիկողայոս Բաստրեանց

Երկու թիւրքիացիներ, որոնք երկար տարիներ պարապել են պարտիզպանութեամբ և ծաղկապահութեամբ և լաւ գիտեն իրանց արհեստը, ցանկանում են պաշտօն ստանալ։ Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը։ 2—3

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վենեբական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանձակայա փողոց, տուն Մարկարով, № 31։
(Ե. հ. շ.) 10—100

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1900
ЗАДУШЕВНОЕ СЛОВО
ДВА еженед. иллюстрир. журнала для ДѢТЕЙ: младш. (5—9 л.) и старш. (9—14 л.) возраста, основанные
С. М. МАКАРОВОЙ
И ИЗДАВАЕМЫЕ СЪ УЧАСТИЕМЪ ИЗВѢСТНЫХЪ РУССКИХЪ ПИСАТЕЛЕЙ, ПЕДАГОГОВЪ И ХУДОЖНИКОВЪ.
ПОДПИСНОЙ ГОДЪ СЧИТАЕТСЯ СЪ 1-го НОЯБРЯ
Подписчики каждаго изд. получатъ въ теченіе года 52 №№
БОГАТО ИЛЛЮСТРИРОВ. ЖУРНАЛА, заключающаго въ себѣ разнообразное чтеніе для дѣтей; для родителей же:
„ДѢТСКІЯ МОДЫ“ и „ПЕДАГОГИЧЕСКІЙ ЛИСТОКЪ“.
Кромѣ того, подписчикамъ будутъ разосланы въ теченіе года:
ПРЕМІИ:
а) Къ журналу для дѣтей младшаго возраста: БОЛЬШАЯ ХРОМОЛИТОГРАФИРОВАННАЯ КАРТИНА размѣромъ 14½ × 10¾ вершковъ: „СЪ ДОБРЫМЪ УТРОМЪ“ и 6 томиковъ „НОВОЙ БИБЛІОТЕЧКИ ЗАДУШЕВНАГО СЛОВА“ съ иллюстраціями.
в) Къ журналу для дѣтей старшаго возраста: „Русскій Литературный Пантеонъ“—3 больш. выпуска; „Русскіе писатели въ краткихъ характеристикахъ; 16 выпуск. „Библіотеки Знаменитыхъ Писателей Для Юношества“ и „Календарь“ въ изящн. перепл., со „Справочникомъ“.
ПОДПИСНАЯ ЦѢНА наждаго изданія на годъ, съ доставкою и пересылкою . . . . . 6 Р.
Допускается разсрочка: первоначальный взносъ 2 рубля.
Подписка приним. въ книжн. магаз Т-ва М. О. Вольфъ:
С.-Петербургъ, Гост. Дв., 18.
Москва, Кузн. Мостъ, 18.
2—6

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“
Ежедневная газета,
Съ будущаго года будетъ выходить въ увеличенномъ форматѣ по слѣдующей, утвержденной правительствомъ программѣ: I. Приказы по военному и гражданскому управленіямъ Кавказа и Закавказья. II. Статьи по внутреннимъ вопросамъ. III. Обозрѣніе иностранной политической жизни. IV. Научно-литературный отдѣлъ. V. Общая хроника: внутренняя и иностранная. VI. Библіографія. VII. Мѣстный отдѣлъ и корреспонденціи. VIII. Обширный справочный отдѣлъ. Иллюстрированныя прибавленія къ газетѣ, посвященныя кавказовѣдѣнію и матеріаламъ исторіи Кавказа въ связи съ постепеннымъ развитіемъ въ краѣ гражданскихъ учрежденій, будутъ выходить попрежнему, не менѣе двѣнадцати номеровъ въ годъ.
По понедѣльникамъ и послѣпраздничнымъ днямъ подписчикамъ будутъ разсылаться телеграммы.
Подписная цѣна остается безъ измѣненія, а именно: *иногороднымъ*: на годъ—7 руб., на 6 мѣсяцевъ—3 руб. 50 к., на 3 мѣсяца—2 руб., на 1 мѣсяцъ—1 руб.
Подписка принимается исключительно *въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій. № 3.*
1—3

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը
յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թի աշնան և 1900 թի գարնան ծախվում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մոտ 4000 մէկ և երկու տարեկան ամենաընտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, մշտադալար և տերևազարդ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ։
(Ե. հ. շ.) 24—40

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 23 դեկտեմբ. 3 յունվարի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲՐԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Գարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների և ճանապարհորդների մասին տարբեր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարբէրժիայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Թօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մուրադեանցներին, Նարբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՍԿ—պ. Մելխիսեդեկ Հերշենզոնին։
(Ե. հ. շ.) 20—20

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՉՐԱՂԱՑԱՔԱՐԵՐ
մատչելի գներով և զանազան մեծութեան։
Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.
Որովհետև վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ շատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ։
18—40 Քարահանքի կապալառու՝ Աբրահամ Հասան-Զալալեանց

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գօլովինսկի Պրոսպէկտի վրա, առաջին դիմացիայի հանդէպ, տուն Քաչուէթի սուրբ Գէորգ եկեղեցու։
Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզոնի համար՝
Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ։
Ստացված է նոյնպէս **ՖՈՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ**.— զատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և բէալական ուսումնարանների։
Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ։ Գները ՎԵՐԶՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան։
Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի ⅙ մասը։
28—40



ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵՍԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հոր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգեկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ։
Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հոր փորել կապալով Բիբի Հէյբաթում։
Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տելէֆոն № 749), գործարան. տելէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տելէֆոն № 451.
(Ե. հ. շ)

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Декабря 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул. № 27.